

Հայաստանյայց Առաքելական  
Ս. Եկեղեցին  
և ՀՀ օրենսդրությունը

(քննարկման նյութեր)

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
ՀԱՅԱՍՏԱՆՑԱՆ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ



ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՄԵՂԱՆ  
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հայաստանյայց Առաքելական  
Ս. Եկեղեցին  
և ՀՀ օրենսդրությունը  
(քննարկման նյութեր)

Սբ Էջմիածին 2013

**Սույն գրքույկը ներկայացնում է ԵՀԽ  
Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական  
բարեգործական հիմնադրամի և Մայր Աթոռ  
Սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգի  
«Երկխոսության սրահ» համատեղ ծրագրի  
շրջանակներում կազմակերպված «Հայաստանյայց  
Առաքելական Ս. Եկեղեցին և ՀՀ օրենսդրությունը»  
թեմայով քննարկման (8 նոյեմբերի 2013 թ., ՄԲ  
Էջմիածին) նյութերը:**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան .....	5
Զեկույց Ա – Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունը Հայաստանի Հանրապետությունում .....	7
Զեկույց Բ – Նկատառումներ Հայաստանում «Խղճի ազատության մասին» օրինագծի վերաբերյալ .....	19

# Ն Ա Խ Ա Բ Ա Ն

2013 թ. նոյեմբերի 8-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, նախաձեռնությամբ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի և Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի, «Երկխոսության սրահ» համատեղ ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ «Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին և ՀՀ օրենսդրությունը» թեմայով քննարկում:

Հայաստանի Հանրապետությունում Եկեղեցին անջատ է պետությունից: Ինչպես այլ երկրներում Հայոց Եկեղեցու թեմերն ու եկեղեցական մարմինները տվյալ պետության հետ իրենց հարաբերությունները հստակեցնում են իրենց կանոնադրությունների և անհրաժեշտ այլ փաստաթղթերի գրանցումով, այնպես և Հայաստանում այդ առումով նախ մի քանի Եկեղեցի-պետություն համաձայնագրերով, ինչպես օրինակ «Մտադրությունների հուշագիրը», բանակում հոգևոր ծառայության շուրջ համաձայնագիրը, հանրակրթական դպրոցներում «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդման վերաբերյալ համաձայնագիրը, իրավականորեն կարգավորվեցին և հստակեցվեցին հարաբերությունները հայրենի պետության հետ: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին միակ ազգային կառույցն է՝ հաստատությունը, որն անընդմեջ իր առաքելությունն է իրականացրել հայ ժողովրդի կյանքում՝ իր ներկայությունն արձանագրելով հայոց կյանքի տարբեր ոլորտներում:

Ակնհայտ է, որ ներկայիս Հայ Եկեղեցու գործունեության դաշտն հասարակական կյանքում

առավել ընդարձակ է, ինչը ամրապնդվեց միայն օրենսդրական ճանապարհով: Եվ Հայաստանի Հանրապետությունը, որպես արտահայտիչը հայ ժողովրդի անցյալի ժառանգության և գալիք իղձերի, չէր կարող անտեսել 2000-ամյա ազգային ու համաքրիստոնեական հաստատության՝ Հայոց Եկեղեցու առաքելությունը և նրա առանձնակի կարգավիճակը չարտացոլել երկրի Սահմանադրության մեջ:

Հանրաքվեով ՀՀ ժողովուրդը հաստատեց, որ ընդունում է Հայաստանյայց Սբ. Եկեղեցին իբրև ազգային եկեղեցի, ճանաչում եկեղեցու բացառիկ առաքելությունը հոգևոր կյանքում, մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

Մշակվեց և ընդունվեց նաև առանձին՝ Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու հարաբերությունները կարգավորող օրենք:

Քննարկման ընթացքում արծարծվեցին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու տեղին, դերին և օրենսդրական կարգավիճակին վերաբերող հարցեր, ինչպես նաև քննության առնվեցին հանրությանը ներկայացված «Խղճի ազատության մասին» նոր օրինագծի առանձին կետեր:

**Վահրամ քահանա Մելիքյան**

# ԶԵԿՈՒՅՑ Ա

*Տ. Շահե վարդապետ Անանյան  
Միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի*

**ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՓՈՒՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Հայաստանյայց Եկեղեցու տեղը, դերն ու  
օրենսդրական կարգավիճակը**

Եկեղեցի-պետություն փոխհարաբերություններն անցնող մի քանի դարերի ընթացքում ձեռք են բերել կրոնական, քաղաքական և քաղաքացիական կարևորագույն նշանակություն: Միավլած չեմ լինի, եթե նշեմ, որ Ֆրանսիական մեծ հեղափոխությունից հետո աշխարհի պետությունների գրեթե ճնշող մեծամասնության մեջ դրանք սահմանագծել են երկրի բնակչության ներքին կենցաղն ու պետաիրավական մտածելակերպի առանցքը: Ուստիս դրանց քննարկումները շատ հաճախ դուրս են եկել պետաիրավական և օրենսդրական նորմերի քննարկման շրջանակից՝ շոշափելով համամարդկային ու բարոյական հիմնարար արժեքները, որոնք նաև տվյալ երկրի ժողովրդի ինքնության ու ազգային պատկանելության էական բաղկացուցիչ մասն են կազմում:

Այս իմաստով բացառություն չէ նաև հայ ժողովուրդն ու հայոց պետականությունը, որտեղ Եկեղեցի-պետություն փոխհարաբերություններն ունեն հարուստ ու դարավոր պատմություն: Կկամենայի բերել մի քանի

պատմաքաղաքական օրինակներ, որոնք կարևորագույն դերակատարություն են ունեցել Հայոց պետության մեջ եկեղեցու դերի սահմանման ու արժևորման ճանապարհին և ապա պատմական այդ դեպքերի ու իրադարձությունների լույսի ներքո վերլուծել Հայաստանյայց Եկեղեցու ներկայիս տեղն ու դերը Հայաստանի Հանրապետությունում:

Պատմության ընթացքում, քրիստոնեության ընդունումից հետո, Հայաստանյայց Եկեղեցին մշտապես եղել է երկրի ներսում դատաիրավական և կանոնական համակարգի պատասխանատուն: Պատահական չէ, որ նույնիսկ Ե դարում՝ պարսից տիրապետության ժամանակաշրջանում, հայոց կաթողիկոսին էր տրված երկրի մեծ դատավորի գործառույթը: Պատմական այս առանձնահատկությամբ էր պայմանավորված թերևս միջնադարյան Հայաստանում պետության և հասարակության փոխհարաբերությունները կարգավորող կանոնների ու օրենքների առատությունը տարբեր օրենսդրական-կանոնական ժողովածուներում:

Մյուս կարևոր առանձնահատկությունը Հայոց կաթողիկոսի ընտրության կարգն էր, որը, ընկալյալ ավանդության համաձայն, իրականացվում էր ժողովրդի ու երկրի տարբեր խավեր ներկայացնող Ավագաց ժողովով և եկեղեցականների համագումարով: Այս վերջին փաստն ավելի ակնառու դարձավ ու կարևորություն ձեռք բերեց հատկապես հայոց պետականության բացակայության պայմաններում, երբ հայ ժողովրդի փաստացի ղեկավարն ու պատասխանատուն՝ Ամենայն Հայոց կաթողիկոսը, ընտրվում էր Հայաստանի և աշխարհասփյուռ հայկական գաղթ-



օջախների ներկայացուցիչների կողմից: Դրանով եկեղեցին ու նրա ղեկավարը համարվում էին ազգընտիր, ասել է թե՛ ընտրված և վավերացված ամբողջ ազգի կողմից: Համազգային օրինական վավերականությամբ օժտված այս մարմինն էր իրականացնում (անշուշտ, պետության բացակայության պայմաններում, բայց շատ հաճախ նույնիսկ պետության առկայության դեպքում) հայ հասարակության ամբողջական քվեի կամ ձայնի արտահայտումն այս կամ այն միապետի կամ պետության առաջ: Պատմական մանրամասնությունների մեջ չմտնելով՝ շեշտեմ միայն, որ այդ քիչ թե շատ ամբողջական համակարգը պահպանվեց Ե.-Ի. դարերում՝ անցնելով պատմական բազմաթիվ փոփոխությունների միջով, ընդհուպ մինչև առաջին Հանրապետության տարիներ (1918-1920 թթ.): Ահա այս ժամանակաշրջանից սկսած է, որ կարող ենք որոշակի հստակությամբ խոսել Եկեղեցի-պետություն փոխհարաբերության մասին՝ այսօրվա մեր ընկալման համաձայն: Այս կարճ ժամանակահատվածում Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները կարգավորող փաստաթուղթը պառլամենտական-դեմոկրատական կառուցվածք ունեցող ՀՀ-ում «Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցու և Հայաստանի Հանրապետության միջև դաշնագիրն» էր, որն այդպես էլ, ըստ էության, գործածության մեջ չմտավ ՀՀ-ում՝ խորհրդային կարգերի հաստատումով: Փաստաթղթի առաջին կետը նախատեսում էր իշխանությունների փոխձանաչում, իսկ Ամենայն Հայոց կաթողիկոսի անձն ու որոշումները նախամեծար էին համարվում ազգային-եկեղեցական և կրոնա-բարոյական հարցերում: Երկ-

րորդ կետով հայտարարվում էր Եկեղեցու՝ իշխանությունից անկախ լինելը: Եկեղեցին ազատ էր իր տնտեսական և վարչական մյուս գործառնությունների մեջ: 19 կետերից բաղկացած դաշնագրի մյուս կարևոր կետերը չորրորդն ու յոթերորդն էին, որոնցով նախատեսվում էր դպրոցներում, մշակութային, կրոնական, քարոզչական և գիտական ոլորտներում Եկեղեցու ազատ գործունեություն և Հայաստանի հանրապետության՝ իբրև Եկեղեցու կողմից սրբագործված իշխանության հիշատակումը հրնթացս Սուրբ Պատարագի:

Ինչպես արդեն նշվեց, սույն դաշնագիրն այդպես էլ գործածության մեջ չմտավ առաջին Հանրապետությունում, սակայն, դատելով դրա բնույթից ու բովանդակությունից, կարելի է վստահորեն նշել, որ այն լավագույնս արտահայտում էր շուրջ վեց դար շարունակ իր անկախության համար պայքարած քրիստոնյա հայ հասարակության մտայնությունը:

Խորհրդային կարգերի հաստատումով (2 դեկտեմբեր, 1920 թ.) ՀԽՍՀ նոր Սահմանադրությունը (1922 թ.) հռչակում էր պետության և եկեղեցու, դպրոցի և եկեղեցու անջատման մասին: Սահմանադրության 50-րդ հոդվածը նախատեսում էր խղճի ազատություն, այսինքն՝ ցանակացած կրոն դավանելու կամ չդավանելու ազատություն: Ավելի ուշ, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1977 թ. ապրիլի 28-ի հրամանագրի համաձայն, 18-ից բարձր քաղաքացիները կարող էին միավորվել կրոնական խմբավորումների կամ միությունների մեջ: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ստեղծված (1943 թ.) ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ եկեղեցու

գործերի խորհուրդը, փաստորեն, ԽՍՀՄ գոյության ողջ ընթացքում Հայ եկեղեցու հանդեպ պետական քաղաքականության իրականացման միակ օրգանն էր:

Երրորդ հանրապետության տարիներին (1991 թվականից սկսած) Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները նոր, դինամիկ թափ ստացան: ԽՍՀՄ փլուզմամբ և Ղարաբաղյան ազատագրական շարժմամբ պայմանավորված ազգային վերագարթոնքի օրերին Հայաստանյայց առաքելական եկեղեցին (ՀԱԵ) հատկապես դիտվում էր իբրև «վերադարձ դեպի ակունքները» կարգախոսի միակ կրողը: Ինչպես ականատեսի վկայությամբ գրում է հայազգի անգլիստ խոս աստվածաբանը (Vigen Guroian)՝ «Armenia's religious awakening is by no means uniform, however» («Այնուամենայնիվ, Հայաստանի հոգևոր վերագարթոնքն անկասկած համատարած է»): Թերևս ազգային ոգու աննախընթաց այս վերելքն էր պատճառը, որ այդքան էլ կարևորություն չտրվեց Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների խիստ օրենսդրական կարգավորմանը: Մարդկանց համար Եկեղեցու դերն անվիճելիորեն բացառիկ էր ազատագրական պայքարի ու Մեծ երկրաշարժի օրերին՝ իբրև համազգային ու համահայկական միակ կառույց:

Կրոնի նկատմամբ նոր վերաբերմունքի հիմքը դրվեց «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» նոր օրենքով 1991 թ. հունիսի 17-ին, իսկ 1995 թ. հուլիսի 5-ին համազգային քվեարկությամբ ընդունված նոր Սահմանադրության 23-րդ հոդվածը սահմանում էր, որ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք:

Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների համար վճռորոշ եղան 2005 թ. նոյեմբերի 27-ին ընդունված սահմանադրական փոփոխությունները, որոնց համաձայն պետությունը Հայաստանյայց առաքելական եկեղեցին ճանաչեց ազգային եկեղեցի և հնարավոր համարեց Եկեղեցի-պետություն փոխհարաբերության կարգավորումը հատուկ օրենքով: Վերջինս ընդունվեց 2007 թվականի փետրվարի 22-ին և գործածության մեջ մտավ մարտի 14-ից: Օրենքը կարգավորում է Հայաստանյայց եկեղեցու և ՀՀ-ի փոխհարաբերությունները հետևյալ ոլորտներում.

ա. Իշխանության ճանաչում. ՀՀ-ն ճանաչում է Հայաստանյայց առաքելական եկեղեցին՝ Ս. Էջմիածին կենտրոնով և երեք նվիրապետական աթոռներով, ընդունում է եկեղեցու ինքնակառավարումն իր նվիրապետության սահմաններում, իսկ Ամենայն Հայոց կաթողիկոսին շնորհվում է ՀՀ քաղաքացիություն, եթե նա ՀՀ քաղաքացի չէ (հմմտ. Հոդված 2.1, 2.2, 3):

բ. Սահմանադրությամբ ընդունված (Հոդված 8.1) և «Խղճի ազատության մասին» օրենքով ու միջազգային պայմանագրերով կարգավորվում են ընդհանուր հարաբերությունները, իսկ սույն օրենքով առանձնահատուկ հարաբերությունները եկեղեցու և պետության միջև:

գ. Ազգային-եկեղեցական ընդհանուր ժառանգության մասին. պետությունը, համաձայն հոդված 5-ի, ընդունում է ՀԱԵ պատմական, մշակութային, հոգևոր և վավերագրական ժառանգությունը որպես ազգային ինքնության կարևոր և անբաժանելի մի մաս:

դ. Հոդված 6-ի և 7-ի համաձայն՝ եկեղեցին և պետությունը համատեղ են իրականացնում ազգային-

մշակութային արժեք ունեցող վանքերի ու հուշարձանների վերանորոգումը կամ վերակառուցումը:

ե. Հոդված 8-ի համաձայն՝ Եկեղեցին իրավունք է ստանում բացելու և հովանավորելու տարրական, միջնակարգ, ավագ դպրոցներ և բարձրագույն ուսումնական հաստատություններ, ինչպես նաև մասնակցելու դպրոցներում դասավանդվող ՀԱԵ պատմություն առարկայի դասագրքերի ստեղծմանը և ուսուցիչների վերապատրաստմանը:

զ. Հոդված 9-ի համաձայն՝ պետությունը ճանաչում է, ստորագրված համաձայնագրով սահմանված կարգին համապատասխան, ՀԱԵ կանոնական ծեսով իրագործած ամուսնություններն ու հռչակած ամուսնալուծությունները:

է. Հոդված 10-ի և 11-ի համաձայն՝ եկեղեցին իրավունք է ստանում ունենալու մշտական հոգևոր ներկայացուցիչ մանկատներում, տուն-ինտերնատներում, հիվանդանոցներում, գորամասերում, ազատագրկման վայրերում, հարկումից ազատվում են հասարակական դրամահավաքները և ծիսական նշանակության պարագաների արտադրությունը:

ը. Հոդված 12-13-ը սահմանում են ձեռնադրյալ խոստովանահոր անձեռնմխելիությունը, եթե հանցագործության մասին մանրամասները նրան հայտնի են դարձել խոստովանության ժամանակ (The Seal of Confessional): ՀՀ-ն դառնում է ՀԱԵ-ի՝ իբրև ազգային եկեղեցու, պաշտպանը, միջազգային նորմերին համապատասխան, նաև այլ երկրներում, որտեղ գործում է ՀԱԵ-ն:

Ինչպես կարելի է նկատել, այս վերջին օրենքը բավական ամբողջական մի փաստաթուղթ է, չնայած առկա են նաև որոշ թերություններ ու բացթողումներ: Այնուամենայնիվ, փաստաթղթից կարելի է որոշ գաղափարներ առանձնացնել՝ ոչ թե Եկեղեցուն տրված մենաշնորհն արդարացնելու, այլ պարզապես փաստաթղթի՝ միջազգային նորմերին համապատասխան տրամաբանությունը հասկանալու նպատակով:

ՀՀ Սահմանադրության 8.1 հոդվածը, ճանաչելով Հայ ժողովրդի հոգևոր կյանքում ՀԱԵ բացառիկ առաքելությունը, վերջինս սահմանում է ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման երկու փոխլրացնող հասկացություններով: Դրանք եկեղեցի-պետություն փոխհարաբերություններում բավական հասկանալի են դառնում, եթե հաշվի առնենք հայ ժողովրդի պատմության մոայլ էջերը և մասնավորապես Հայ Սփյուռքի գոյությունն ամբողջ աշխարհում: 1993 թ. Վիեննայում գումարված «Մարդու իրավունքների համաշխարհային կոնֆերանսի» հռչակագրի 5-րդ հոդվածը հստակորեն սահմանում է, որ «եթե անհրաժեշտություն կա ուշադրությունից չվրիպեցնելու ազգային և տարածաշրջանային, ինչպես նաև պատմական առանձնահատկությանց կարևորությունը, ապա պետությունը պարտավորվում է...պաշտպանել մարդու բոլոր իրավունքներն ու հիմնարար ազատությունները»:

Այս տեսանկյունից դիտարկելով՝ պատմական ու ազգային առանձնահատկությունները (95% հայեր, 91%-ից ավելին ՀԱԵ հետևորդներ, երկու անգամ ավելի մեծ Սփյուռքի առկայություն և այլն) բավական մեծ տեսակարար կշիռ են կազմում Հայաստանում՝ ստի-

պելով մտածել սեփական ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման մասին: Հետևաբար, կարող ենք եզրակացնել, որ ՀԱԵ և ՀՀ միջև կնքված օրենքը բխում է պետության՝ ազգային մշակույթի և ազգային ինքնության պահպանման մտահոգությունից, և ոչ թե որևէ կրոնական կազմակերպության, ի դեմս ՀԱԵ, մենաշնորհ տրամադրելու ցանկությունից: Ինքնին հասկանալի է, որ արդեն եկեղեցաբանական ըմբռնումով՝ եկեղեցին չի կարող ենթարկվել ազգային-պետական օրենքներին, այլ միմիայն Ավետարանական ոգուն և Սրբազան Ավանդությանը, որ դարեր շարունակ սահմանվել է եկեղեցու ընդհանրական գիտակցության մեջ:

Սույն մտահոգությունից դրոված է նաև ՀԱԵ պատմություն առարկայի դասավանդման անհրաժեշտությունը դպրոցներում, որը բազմաթիվ տեղի ու անտեղի քննադատությունների արժանացավ ԶԼՄ-ներում և հասարակական քննարկումներում: Սակայն եթե այն ևս տեղադրենք օրենքի այս տրամաբանության մեջ, կարելի է որոշակի հստակությամբ նշել, որ ՀԱԵ պատմություն առարկան սեփական ազգի արմատների ու ինքնության պատմության փոխլրացնող երեսն է: Ավելին՝ առարկայի դասավանդման մեջ ներառված են նույնիսկ համաշխարհային այնպիսի կրոնների համառոտ պատմությունը (իսլամ, հինդուիզմ, հին հեթանոսական կրոններ և այլն), որոնք այս կամ այն կերպ ազդել են նաև համաշխարհային պատմության ընթացքի վրա: Այս իմաստով, պարզապես օրենսդրական առումով տեղին չէ խոսել կրոնական դաստիարակության մասին, չնայած պետությունը, ինչպես ԵՄ որոշ անդամ երկրներ (Գերմանիա, Ռումինիա, Շվեդիա,

Նորվեգիա, Բելգիա), կարող է միջազգային նորմերին համապատասխան (հմմտ. «Մարդու իրավունքների վերաբերյալ Եվրոպական կոնվենցիա», Հոդված Բ) այն ընդգրկել իր կրթական համակարգում:

Բերված օրինակները, որոշ չափով լուսաբանում են օրենքի՝ այսպես կոչված «աշխարհիկ-laique» պետությանը բնորոշ հատկությունները: Խոսքս ավելի չերկարելու նպատակով կկամենայի մի վերջին դիտողությամբ եզրափակել այն:

Սահմանադրությամբ և 2007 թվականին ընդունված օրենքով ՀԱԵ եկեղեցուն պետական փաստաթղթի մեջ տրված «Ազգային» որակումը բացարձակապես որևէ կրոնական կամ խտրականության դրսևորման երանգ չունի: Այն պարզապես ԵՄ երկրներում ընդունված «Եկեղեցի-պետություն» փոխհարաբերության իրավաբանական դրսևորումն է: Այս իմաստով «ազգային» եզրն առավել նման է Սկանդինավյան երկրներում կիրառվող Folkekirken՝ «Ժողովրդական եկեղեցի» եզրին, որով հաշվի են առնվում տվյալ եկեղեցու պատմական, ազգային, մշակութային և քաղաքական դերն ու կարևորությունը երկրի կյանքում: Եվ, բնականաբար, պետությունն այս մտահոգությունից ելնելով է նկատում հատուկ և առանձին օրենքի անհրաժեշտությունը տվյալ եկեղեցու հետ: Մակայն սա ամենևին էլ չի նշանակում, որ ընդունված օրենքը չի ներառում «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի դրույթները, մանավանդ որ 2007 թվականի օրենքում, (Հոդված 4) շեշտվում է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի կարևորությունը՝ իբրև ՀԱԵ և ՀՀ ընդհանուր հարաբերությունները կարգավորող գործոն:



ՀՀ Սահմանադրության և օրենսդրության համաձայն՝ բոլոր կրոնական կազմակերպություններն էլ հավասար են օրենքի առաջ: Բայց պետության հետ նրանց հարաբերությունները կարող են գործել ըստ հետևյալ սկզբունքի՝

ա. եկեղեցիներ և պետություն. վերաբերում է ընդհանրապես պետության և եկեղեցիների ու կրոնական կազմակերպությունների փոխհարաբերությունների օրենսդրական կարգավորմանը

բ. Եկեղեցի և պետություն. վերաբերում է տվյալ երկրի ներսում առավել մեծ թվով հետևորդներ և առավել մեծ ազգային, հոգևոր և մշակութային նշանակություն ունեցող եկեղեցու և պետության առանձնահատուկ փոխհարաբերության օրենսդրական կարգավորմանը: Ընդ որում՝ այդ եկեղեցու տեղն ու դերը պետության կրոնական կազմակերպությունների մեջ կարելի է բնորոշել իբրև «առաջինը հավասարների մեջ՝ *primus inter pares*»: Այս վերջին մոդելին է վերաբերում Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունը ԵՄ այնպիսի երկրներում, ինչպիսիք են, օրինակ, Դանիան և Բելգիան:

### **Օգտագործված գրականություն**

1. E. DECAUX, *Les grands textes internationaux des droits de l'homme*, coll. La Documentation française, Paris, 2008.

2. G. ROBBERS (nd.), *Եկեղեցի և լիցիլես ընդհանուրում*, Baden-Baden, 20082.

3. V. GUROIAN, *Faith, Church, Mission: Essays for Renewal in the Armenian Church*, New York, 1995.

4. William J. HOYE, Demokratie und Christentum: Die christliche Verantwortung für demokratische Prinzipien, Ashendorff, Münster, 1999.

5. M. BROCKER/T. STEIN, Christentum und Demokratie, Darmstadt, 2006.

6. Կ. Միքույան, Քաղաքական ուսմունքների պատմություն, Երևան, 2006:

7. Վ. Ենգիբարյան/Ա. Չախոյան, Եկեղեցի, Պետություն և Հասարակություն, Երևան, 2009:

8. Գարեգին արք. Համբարձումյան, «Մայիսյան ոգին՝ Հայ Եկեղեցու և Պետության հարաբերությունների օրինակով», Էջմիածին Ե (2012), էջ 24-29:

9. Վ. Սայադյան, «Խղճի ազատության ոլորտը կարգավորող ՀՀ օրենքների շուրջ», Էջմիածին Գ (2013), էջ 18-25:

10. Իգնատիոս վրդ. Մալխասյան, «Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները Գևորգ Զ-ի օրոք», Էջմիածին Գ (2013), էջ 50-61.:

# ԶԵԿՈՒՅՑ Բ

*Մտեփան Դանիելյան*  
*«Համազործակցություն հանուն*  
*ժողովրդավարության» կենտրոն*  
*Religions.am կայքի խմբագիր*

## **ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ «ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ<sup>1</sup>**

Յուրաքանչյուր երկիր իր օրենսդրությամբ իրականացնում է իր ազգային քաղաքականությունը: Մակայն, անկախ քաղաքականությունից, երկրում ընդունված օրենքներն անհրաժեշտ է որ համապատասխանեն երկրի Սահմանադրությանը և միջազգային պարտավորություններին: Այս առումով որոշակի հակասություններ կան «Խղճի ազատության մասին» նոր օրինագծում:

### **Մտահոգություններ որոշ եզրերի վերաբերյալ**

Նոր՝ «Խղճի ազատության մասին» օրինագծի վերնագրում, ինչպես նաև օրինագծի առանձին հոդվածներում «խղճի» բառից հետո, հավանաբար, բաց է թողնված «ազատության» բառը: Նկատենք, որ «Խղճի

---

<sup>1</sup> Մույն զեկույցի ամբողջական տարբերակը կարող եք գտնել հետևյալ հղումով <http://www.religions.am/arm/documents/comments/Նկատառումներ-եվ-առաջարկություններ-խղճի-ազատության-մասին-նոր-օրենքի-նախագծում-փոփոխություններ-կատարելու-մասին/>: Գրքույկում արտացոլված են զեկույցի այն մասերը, որոնք ուղղակի վերաբերել են քննարկման նյութին:

ազատությունը» քաղաքական և իրավական եզրույթ է, որն ունի սահմանում և ենթադրում է նրանից բխող իրավունքներ, մինչդեռ «խիղճ»-ը բարոյագիտական կատեգորիա է և հստակ սահմանման ենթակա չէ: Այս դեպքում առավել նպատակահարմար է «խղճի ազատություն»-ը փոխարինել «կրոնական կազմակերպություններ» բառակապակցությամբ:

Նույն կերպ «ՀՀ և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» փոփոխությունների մասին օրենքի նախագծում օգտագործված է «ազգային եկեղեցի» եզրը, ինչն իրավաբանորեն անհասկանալի բառակապակցություն է: Անհրաժեշտ է, որ այդ բնորոշումը կամ հանվի, կամ էլ տրվի այդ եզրի իրավաբանական սահմանումը: Բացի այս հայաստանյան ՁԼՄ-ներում շատ կրոնական կազմակերպություններ բնորոշվում են որպես «հակազգային», որի պատճառով նսեմացվում է նրանց անդամների արժանապատվությունը: Նման չսահմանված եզրերը ոչ միայն չեն կարգավորում կրոնական ոլորտի իրավա-հարաբերությունները, այլև հակառակը՝ ծնում են նոր խնդիրներ:

Սահմանադրությանը հակասում է նաև օրինագծում տեղ գտած «համոզմունք» բառը, քանի որ Սահմանադրությամբ երաշխավորվում է կրոնի ազատություն, իսկ «համոզմունքների ազատություն» հասկացությունը Սահմանադրությունից բացակայում է:

### **Հոգեորսություն**

Օրինագծում մի շարք հասկացություններ չունեն իրավական ձևակերպում և փոխառնված են աստվածաբանության ոլորտի տերմինաբանությունից, որի

հետևանքով էլ ամրագրվող դրույթներից շատերը չունեն իրագործման մեխանիզմներ: Այս նկատառումով՝ նախագծի ամենավիճելի և, մեր կարծիքով, Սահմանադրությանն ու միջազգային պարտավորություններին ամենակոպիտ կերպով հակասող դրույթները վերաբերում են «հոգեորսություն» հասկացությանը: Նախագծում օգտագործված «հոգեորսություն»-ը փոխառնված է աստվածաբանության ոլորտից: Այն կարելի է փոխարինել «ոչ պատշաճ կամ անթույլատրելի դավանափոխություն» եզրով, անշուշտ, տարբերակելով «դավանափոխություն» եզրից: Վերջինը սահմանադրական իրավունք է, որն ամրագրված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայում, որտեղ ասվում է. «Այս իրավունքը ներառում է ցանկացած կրոն դավանելու կամ չդավանելու, համոզմունք ունենալու կամ չունենալու, կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը, կրոնը կամ համոզմունքը ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ հրապարակավ կամ մասնավոր կարգով ուսուցման, քարոզի, եկեղեցական արարողությունների կամ պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը, այդ թվում՝ առօրյա կյանքում սեփական կրոնին և համոզմունքներին համաձայն գործելու ազատությունը»:

Հարկ է նշել, որ միսիոներությունը կամ այլոց սեփական կրոնական տեսակետները քարոզելը, եթե դա պատշաճ կերպով է արվում, ամրագրված է ինչպես վերոհիշյալ կոնվենցիայում, այնպես էլ ՀՀ Սահմանադրությունում. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և

գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:

Օրինագծում տեղ գտած «հոգեբանական բռնություն» արտահայտությունը նույնպես չունի իրավական բովանդակություն: Եթե ֆիզիկական բռնությունը անվիճելիորեն առաջացնում է քրեական պատասխանատվություն, ապա դժվար է սահմանել, թե ինչ է նշանակում «հոգեբանական բռնությունը», և ինչպես պետք է պատասխանատվության ենթարկել այն կիրառողին:

Մի շարք հարցերի տեղիք է տալիս նաև «սոցիալական բնույթի առավելություն» արտահայտությունը: Արդյո՞ք սոցիալական բարեգործական ծրագիրը, որը ցանկացած կրոնական կազմակերպության գործունեության հիմնական ուղղություններից է, որակավորվում է որպես «սոցիալական բնույթի առավելության տրամադրում»: Նախագծում ձևակերպված չէ, թե ինչպե՞ս տարբերակել իրական բարեգործական ծրագրերը հասարակության կյանքի համար վտանգ պարունակող և անհանդուրժողականությանը նպաստող ծրագրերից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում վերջինի համար նախատեսվում է տուգանք. «Դավանափոխ անելու նպատակով այլ կրոնական կամ դավաբանական պատկանելիություն կամ հայացքներ ունեցող անձի նկատմամբ կրոնական բնույթի ցանկացած քարոզչական ներգործություն, որը դրսևորվում է այդ անձին երկու կամ ավելի անգամ հետապնդելով կամ նյութական կամ սոցիալական առավելություն տրամադրելով՝ առաջացնում է տու-

գանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով»:

Նյութական կամ սոցիալական առավելությունների տրամադրման մասին պնդումը խիստ հայեցողական է և դժվար ապացուցելի: Առավել ևս այն դժվար է կապել «դավանափոխության» հետ, հատկապես որ քարոզի միջոցով դավանափոխ անելը յուրաքանչյուր անձի սահմանադրական իրավունքն է, որն արտացոլված է խոսքի ազատության իրավունքում:

Խնդրահարույց և անհասկանալի է նաև Քրեական օրենսգրքում առաջարկվող պատիժը. «Հոգեորսությունը, որը կատարվել է ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության կամ մոլեռանդության շարժառիթով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով»:

Խնդիրն այն է, որ «հոգեորսության» սահմանումը և դրա համար նախատեսված պատժամիջոցները կարող են տարածվել ոչ միայն կրոնական, այլև գիտական, գեղարվեստական, հրապարակախոսական և այլ տիպի գործունեության վրա՝ վերածվելով գրաքննության նմանվող երևույթի և այլախոհների նկատմամբ ճնշումների գործադրելու գործիքի: Օրինագծի 4-րդ հոդվածում շարադրված «այլ կրոնի, համոզմունքի կամ կրոնական կազմակերպության նկատմամբ թշնամանք հարուցելով կամ ատելության հրահրելով...» դրույթը տեսականորեն կարող է կիրառվել ինչպես պատմական, պատմագիտական և կրոնագիտական ուսումնասիրությունների, այնպես էլ ՋԼՄ-ներում զետեղվող հրապարակումների, հարցազրույցների, էլույթների և կարծիքի արտահայտման այլ տեսակների նկատմամբ: Օրենքի

տառին հետևելով՝ տեսականորեն կարող են արգելվել անգամ համաշխարհային և հայկական դասականների բազմաթիվ երկեր:

Ինչ վերաբերում է օրենքով նախատեսվող՝ կազմակերպության անդամների նկատմամբ վերահսկողության արգելքին, ապա օրենսդիրը, թերևս, «տոտալիտար հակասոցիալական աղանդների» արգելման համար օրենսդրական հիմք ստեղծելու չհաջողված փորձ է կատարել: Սակայն մի շարք կրոնական կազմակերպությունների գործունեության առանձնահատկություններից ելնելով՝ կարելի է ասել, որ ապաշխարության և սրբացման քարոզի միջոցով նրանք հասնում են իրենց անդամների մտածելակերպի և վարքի փոփոխությանը: Մինչդեռ նախագծի սույն դրույթը հստակ չի որոշում, թե երբ է վարքի փոփոխությունը հատում վերահսկողության շեմը: Նշված դրույթը քննադատության է արժանացել Վենետիկյան հանձնաժողովի և ԵԱՀԿ փորձագետների համատեղ եզրակացության մեջ, որում մասնավորապես նշվում է, որ հիշատակված դրույթը «խնդրահարույց է, քանի որ կարող է տեղիք տալ այնպիսի մեկնաբանությունների, ըստ որոնց արգելվում են կրոնական այն բոլոր դրսևորումները, որոնք կատարվում են «ուրիշների հետ համատեղ»: Ավելին, այն հեշտորեն կարելի է ընկալել որպես մենաստանների կամ կրոնական ուխտերի արգելք, որոնցում բնորոշ են նման երևույթները: Որևէ եկեղեցում կամ կրոնական այլ համայնքում ձևավորվող ներքին կազմակերպությունը անհնարին է դառնում, եթե սվյալ համայնքի ղեկավարությունը վերահսկողության լծակներ չունենա:



Անհնարին կդառնա նաև ընդհանուր պարտադիր ուսուցումը»:

Վենետիկյան եզրակացության հեղինակների կարծիքով՝ յուրաքանչյուր կրոն փորձում է իր հետևորդների մտածողության, իրազեկության ու վարքագծի վրա որոշակի վերահսկողություն ունենալ: Իրենց իսկ բնույթով կրոնները փորձում են ազդեցություն ունենալ մարդու գիտակցության վրա, մասնավորապես, առողջ ապրելակերպի, պատշաճ վարքագծի վերաբերյալ խորհրդատվությամբ: Հաճախ խրախուսվում են նաև ունեցվածքի նվիրատվությունները:

### **Կրոնական կազմակերպությունների տեսակները և գրանցումը**

Օրինագիծը սահմանում է երկու տեսակի կրոնական միավորումներ՝ խումբ և կազմակերպություն, որից հետո այլևս անդրադարձ չի կատարվում կրոնական խմբին: Բացի այս, եթե անգամ նպատահարմար և հիմնավորված համարենք միավորման տեսակը որոշելու համար 25 հոգու անդամակցությունը, ապա մինևույն է, անհասկանալի է, թե ի՞նչ վարչական մեթոդներով կարելի է վերահսկել կազմակերպության անդամների թիվը, որպեսզի պահպանվի պարտադիր գրանցման պահանջը:

Խիստ մտահոգությունների տեղիք է տալիս կրոնական կազմակերպությունների «պարտադիր գրանցման» պահանջը, որը միանշանակորեն հակասում է ՀՀ Սահմանադրությանը և միջազգային պարտավորություններին: Մեր երկրի գլխավոր օրենքը կրոնական միավորումներ կազմելու իրավունքը չի պայմանավորում գրանցված լինելու հանգամանքով:

Կրոնական կազմակերպություններն իրենց ցանկությամբ կարող են գրանցվել և իրավական կարգավիճակ ստանալ, ինչը նրանց հնարավորություն կտա իրականացնել գործողություններ, որոնց համար անհրաժեշտ է այդ կարգավիճակը:

Օրինագծում նկարագրվում է նաև կրոնական կազմակերպությունների կասեցման կարգը: Եթե կրոնական կազմակերպության ղեկավարներն այնպիսի գործունեություն են ծավալել, որի պատճառով այդ կազմակերպության գործունեությունը կասեցվել է, արդյո՞ք դա չի կարող խախտել տվյալ կազմակերպության մյուս անդամների խղճի ազատության իրավունքը:

### **Այլ նկատառումներ**

1. Օրենքի նախագծում պետք է առանձին կետով հիշատակվի, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու և Հայաստանի Հանրապետության հարաբերությունները կարգավորվում են առանձին օրենքով:

2. Անհրաժեշտ է օրենքում սահմանել օգտագործվող հիմնական հասկացությունների վերաբերյալ առանձնացված հոդված, որը կհստակեցնի համապատասխան հասկացությունների նշանակությունը այդ օրենքի շրջանակներում:

3. Թեև օրինագծում ապահովվում է ծնողների և ինամակալների ազատությունը՝ ապահովելու իրենց երեխաների կրոնական դաստիարակությունը սեփական համոզմունքներին համապատասխան, սակայն մտահոգություն է առաջացնում այն փաստը, որ օրենքը չի կարգավորում երեխայի կրոնական դաստիարա-

կության հարցը այն դեպքում, եթե ծնողները տարբեր կրոնական ուղղությունների հետևորդներ են:

4. Օտարերկրյա պետություններից ստացվող ֆինանսավորման սահմանափակմանը վերաբերող հոդվածում պետք է մասնավորեցնել և հստակեցնել, թե արդյոք Ռուս Ուղղափառ Եկեղեցին կամ Հայաստանի տարածքում բնակվող այլ ազգային փոքրամասնությունների եկեղեցիներ կարող են ֆինանսավորում ստանալ արտասահմանից, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունից: Իսկ եթե այդ եկեղեցիները նման իրավունք ունեն, ապա մյուս եկեղեցիներին նման իրավունքից զրկելը արդյո՞ք խտրականություն չի առաջացնի:

Այս առումով Խիստ մտահոգիչ և անթույլատրելի է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում առաջարկվող հետևյալ փոփոխությունը. «Կրոնական կազմակերպությունների կողմից օտարերկրյա պետություններից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից ֆինանսավորում ստանալը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի յոթհարյուրապատիկից հազարապատիկի չափով»:

Այստեղ չի նշվում, թե դա վերաբերում է նաև Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն, թե՛ ոչ: Եթե ոչ, ինչը հասկանալի է սթափ մոտեցման դեպքում, ապա նման արգելքը ոչ միայն բացահայտ խտրականություն է մյուս կրոնական կազմակերպությունների նկատմամբ, այլև ստեղծում է անհաղթահարելի պայմաններ այդ կրոնական կազմակերպությունների լիարժեք գործունեության համար: Մյուս կողմից խախտվում են այն մարդկանց իրավունքները, ովքեր ցանկանում են

նվիրաբերություններ անել իրենց կրոնական կազմակերպությանը:

5. Օրինագծի որոշ ձևակերպումներ տպավորություն են ստեղծում, թե Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուց բացի կրոնական այլ կազմակերպություններ «եկեղեցի» չեն կարող կոչվել:

6. Նախագծի հոդված 10-ում նպատակահարմար է վերականգնել գործող օրենքի «Կրոնական կազմակերպությունների և պետության հարաբերությունները» գլխի հետևյալ հոդվածները.

- «Պետությունն իրավունք չունի քաղաքացուն հարկադրել դավանելու այս կամ այն կրոնը» (գործող օրենքի հոդված 17-ի ա):

- «Պետությունը չի ֆինանսավորում ինչպես կրոնական կազմակերպությունների գործունեությունը, այնպես էլ աթեիզմի քարոզչությունը, միևնույն ժամանակ կրոնական կազմակերպությունների անդամներին ու սպասավորներին վերապահվում է հասարակական ու քաղաքական կյանքին մասնակցելու իրավունք՝ այլ քաղաքացիների հետ համահավասար» (գործող օրենքի հոդված 18):

- «Գործող օրենսդրությամբ նախատեսված բոլոր քաղաքացիական պարտականությունները տարածվում են նաև կրոնական կազմակերպությունների հավատացյալ անդամների վրա՝ այլ քաղաքացիների հետ համահավասար: Քաղաքացիական պարտականությունների և կրոնական համոզմունքների հակասության առանձին դեպքերում քաղաքացիական պարտականությունների կատարման հարցը կարող է լուծվել այլընտրանքային սկզբունքով՝ օրենքով նախատեսված կարգով համապատասխան պետական

մարմնի և տվյալ կրոնական կազմակերպության փոխադարձ համաձայնությամբ» (գործող օրենքի հոդված 19):

- «Պետությունն իր վրա է վերցնում կրոնական նշանակություն ունեցող պատմական հուշարձանների պահպանությունը՝ անկախ նրանց պատկանելիությունից» (գործող օրենքի հոդված 21):

- «Պետության և կրոնական կազմակերպությունների սույն օրենքով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են պետության և համապատասխան կրոնական կազմակերպությունների վարչությունների համաձայնությամբ» (գործող օրենքի հոդված 23-ի վերջին պարբերություն):

7. Նախագծով սահմանված լիազոր մարմնի իրավասություններում նշվում է, որ պետության և կրոնական կազմակերպությունների հարաբերությունները կարգավորող լիազոր մարմնի իրավասությունների ցանկին ավելացել է կրոնական կազմակերպության գործունեության վերահսկողությունը: Նման ձևակերպումը կարող է հակասել այն դրույթին, ըստ որի «պետությունը չի միջամտելու եկեղեցու և կրոնական կազմակերպությունների՝ օրենքին համապատասխանող գործունեությանը և ներքին կանքին»:

8. Անհարկի է նաև կրոնական կազմակերպության գրանցման համար պահանջների ցուցակում ներկայացվող՝ «...ինչպես նաև կազմակերպության գործունեության այլ առանձնահատկությունների վերաբերյալ» պահանջը, ինչը հնարավորություն է ստեղծում, որ գրանցող մարմինը կամայականորեն պահանջներ ներկայացնի կրոնական կազմակերպությանը, որն անթույլատրելի է:

9. Նախագծի հոդված 8-ում թվարկվում են կրոնական կազմակերպությունների իրավունքները: Մինչդեռ կրոնական կազմակերպությունների իրավունքները կարող են սահմանափակվել միայն այն դեպքերում, երբ նրանց գործունեությունը հակասում է ՀՀ օրենսդրությանը:

10. Հոդված 11-ում ասվում է, որ լիազոր մարմնի իրավասության մեջ է մտնում կրոնական կազմակերպությունների գործունեության վերահսկողությունը, ինչը խիստ ընդգրկուն իրավասություն է: Պետք է, որ լիազոր մարմնի իրավասությունները հստակ սահմանվեն:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՄԵՂԱՆ  
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Հայաստանյայց Առաքելական Ս.  
Եկեղեցին և ՀՀ օրենսդրությունը  
(քննարկման նյութեր)**

Ծրագրի ղեկավար՝ Տ. Վահրամ քահանա Մելիքյան

Օգնական՝ Ժորա սարկավազ Սարգսյան

Մարիամ Ավետիսյան

Խմբագիր՝ Հեղինե Մկրտչյան

Կազմը՝ Backbone Creative Studio



actalliance